

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ՝ Կոտայքի մարզի Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջ-
նակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի (13-դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրություն ըրորշվում է՝ ըստ դասա-
բաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների
ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (հանրակրթական առարկայական
ուսումնական ծրագրերին համապատասխան) և հարցազրույց (մանկավարժական
մասնագիտական գործնական հմտություններ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում
է (Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին
մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխա-
տանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող
փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու
իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև
սեպտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ և կիրակի
և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 25-ին՝ ժամը 14⁰⁰-ին, Կոտայքի մարզի
Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գյուղ Լեռնանիստ,
1-ին փողոց, շենք 33:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (091) 93-35-00 կամ (093) 93-35-00
հեռախոսահամարներով: